ցեն։ Սա Կոստանդիանոս որդի էր Կոստան-
դեայ 'ի Հելենեայ ծնեալ. զոր բերեալ
կայսերացոյց զնա՝ հայր իւր. և նշանաւ
խաչին՝ զոր եթող նշանակ հայրն իւր,
նովաւ զնաց 'ի պատերազմ և յաղթեաց,
և կալաւ զինքնակալութիւնն։ Եւ դրդ-
մամբ կնոջն իւրոյ եբարձ . . . խաչն և
հալածեաց քրիստոնեայս, և եղև անբժշ-
կելի գոդի, մինչ որ մկրտեցաւ 'ի Սեղ-
բեստրոսէ Հայրապետէն, և ապա բժշկե-
ցաւ։ Եւ շինեաց 'ի քաղաքն Հռոմ՝
զկայսերական եկեղեցիսն սրբոյն Պետրոսի
և Պօղոսի և զՄարտիրոսին. և զամենայն իշ-
խանութիւնն Հռոմայ ետ Հայրապետին.
և յետոյ եկեալ 'ի Բիւզանդիայ՝ պարս-
պեաց զնա՝ և կոչեաց յիւր անունն։ Սա
առաքեաց զմայրն իւր Հեղենէ՝ Երուսա-
դեմ, որ եգիտ զսուրբ խաչն Քրիստոսի և
շինեաց զսուրբ Յարութիւնն, զսուրբ Հանդիսարանն, զսուրբ Համբարձումն, և զայլ
անօրինական եկեղեցիսն։ Եւ տարաւ թա-
գաւորին ընծայ զման 'ի կենաց փայտէն.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան